

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Արմավիրի մարզ Վաղարշապատ համայնք էջմիածին քաղաք,
Կարճիկյան փողոց 2 հասցեում նախատեսվող
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի

Պատվիրատու՝

<<Լուսինե-Կիլիկիա>> ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	3
1.1 Հապավումներ	3
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....	7
1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում	13
1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	13
1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....	14
1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա	17
1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	19
2.ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	22
2.1 ՖԻԶԻԿԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	22
2.2 ԿԼԻՄԱՆ.....	27
2.3 Օդային ավազան	30
2.4 Ջրային ռեսուրսներ	31
2.5 Հողերի նկարագիրը	32
2.6 Հիմնային աշխատանքներ.....	32
2.7 Կենսաբազմազանություն	32
2.8 Թափոնների կառավարում	33
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	34
3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	34
3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	35
3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	35
3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	35
3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	36
3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	36
3.3.4 ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ.....	37
3.3.5 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ.....	37
3.3.6 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	38
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	44
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	45
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	48
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	52
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	53

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	<< Լուսինե-Կիլիկիա >> ՍՊԸ
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Էջմիածին քաղաք, Կարճիկյան փողոց 2
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Էջմիածին քաղաք, Կարճիկյան փողոց 2
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Արմավիրի մարզ, ք. Էջմիածին

1.1 Հապավումներ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊՈԱԿ՝	պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծը նախատեսվում է իրականացնել Էջմիածին քաղաք, Կարճիկյան փողոց 2 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,
13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:
14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում:

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

22. ՀՀ կառավարության 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշում:

24. ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրբացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին:

25. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 22-04-2014 <<Պաշտպանություն ադմուկից>> Շինարարական նորմերն հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:

26. Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշումը

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ էջմիածին ք. Կարճիկյան փողոց 2 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագիծը (պատվիրատու՝ «ԼՈՒՍԻՆԵ - ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ) մշակված է համաձայն պատվիրատուի առաջադրանքի և համայնքի կողմից տրամադրված Նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը տեղադրված է հարթ տարածքի վրա, որը ունի 0.8474 հա մակերես:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսված է 12 վերգետնյա հարկ: Հաշվի առնելով առկա ավտոկայանատեղիների խնդիրը, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը ունենալու է մեկ ստորգետնյա ավտոկայանատեղի յուրաքանչյուր մասնաշենքում համապատասխանաբար 10, 17, 12, 18 և 18 - ական ավտոկայանատեղի, ընդհանուր թվով 75 ավտոկայանատեղի, որտեղից վերելակով անմիջապես կարող եք բարձրանալ Ձեր բնակարանի համապատասխան հարկը: Աստիճանավանդակի դռները հակահրդեհային են և ինքնափակվող:

Բնակելի հարկերի բարձրությունը՝ հարկից հարկ ընդունված է 3.30մ.

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի առաջին հարկը հասարակական նշանակության է, որի բարձրությունը նախատեսված է 4.50 մ, որտեղ հնարավոր է նախատեսել բանկի տարածք, սուպերմարկետ, առևտրի սրահ, գրասենյակային տարածք և երեխաների զարգացման կենտրոն:

Շենքի բարձրությունը կազմում է 44.4 մ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսված է 5 առանձին մասնաշենքեր: Յուրաքանչյուր մասնաշենքը ունի 1 շքամուտք յուրաքանչյուր 2 վերելակ՝ բեռնատար և մարդատար, տանիք սպասարկող աստիճանավանդակներ, վերելակի հորանների և տեխնիկական սենքերի համար: Հատակագծային լուծումները մշակվել է համաձայն պատվիրատուի առաջադրանքի, հաշվի առնվելով նորմատիվ պահանջները:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը բաղկացած է 5 մասնաշենքից, բնակարանների ընդհանուր թիվը համապատասխանաբար կազմում է 385 / 61.66 քմ-ց մինչև 147.66 քմ./: Բնակարանների մեծամասնությունից հիմնալի տեսարան է բացվում դեպի Արարատ լեռը:

Համալիրն ունի 1-ին կարգի սեյսմակայունություն և համապատասխանում է սահմանված բոլոր չափանիշներին՝ և դասվում է որպես էներգախնայող, քանի որ բոլոր պատերը ջերմամեկուսացվելու են հատուկ նյութով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ / թեքահարթակներ, սանհանգույցներ / :

Բազմաբնակարան բնակելի համալիրի պատուհանները և պատշգամբ դուրս եկող դռները իրականացվելու է ալյումինե բարձր որակի պրոֆիլներով: Բնակելի համալիրում նախատեսված երկու վերելակ / 1000 կգ. և 630կգ. / «ЭДИНБУРГ Лифт» ООО արտադրության:

Բնակելի շենքի որմնախարիսխը նախատեսված է երեսպատել բազալտե սալիկներով, ճակատների վերին հատվածը նախատեսված է երեսապատել կոմպոզիտ սալիկներով:

Անհատական օդորակիչների արտաքին բլոկները ճակատների վրա նախատեսված է տեղադրել պատշգամբներում քողարկված տարբերակով:

Համալիրն ունի նաև 3884.04 քմ. մակերեսով կանաչ գոտի:

Տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել, այդ թվում տնկվելու են բազմաթիվ դեկորատիվ ծառեր և բույսեր / արծաթափայլ եղևվնի, տույաներ և այլն / Նախատեսված է իրականացնել մանկական խաղահրապարակ , տեղադրել գրուցարաններ :

Նախագծի կոնստրուկտորական մասը մշակված է մոնոլիտ և հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներով / ամրանը տեղական արտադրության /:

Նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

Ապահովված է հրշեջ մեքենաների մոտեցումը դեպի կառույցի բոլոր կողմերը:

Շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը և սարքերը պետք է համապատասխանի ՀՀ-ում գործող նորմերին ու ստանդարտներին և ապահովեն աշխատանքների բարձր որակ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 ,Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համարե շինարարական նորմերի պահանջների նախատեսվել են թեքահարթակներ:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ `

Հողի ընդհանուր մակերես ` 8474 քմ;

Կառուցապատման մակերես 3156.1 քմ- 37.2 %;

Կանաչապատման մակերես ` 3884.04 քմ 45.8 %;

Մայթ, ճանապարհ, ճեմուղի ` 1433.86 քմ 17 %;

Կառույցի ստորգետնյա հարկի մակերեսը ` 3156.1

Ընդհանուր կառուցապատման մակերես ` 45850.6

Բնակարանների քանակ ` 385 հատ;

Ստորգետնյա ավտոկայանատեղի 75 հատ:

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը ` բնակավայրերի:

- գործառնական նշանակությունը ` բնակելի կառուցապատման:

- գրանցված իրավունքի տեսակը ` սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Բնակարանների սանհանգույցներից արտածման համար նախատեսված օդատարերը, առանձին առանձին մտնում են հորանի մեջ հատուկ նախատեսված օդատարի մեջ, մեկուսացվում են բազալտե հանքաքամքակով և բարձրանում են 2,5մ: Հորանի մեջ մտնող օդատարերը պատրաստվում են 0.5 մմ հաստությամբ ցինկապատ պողպատից:

Յուրաքանչյուր բնակարանի սանհանգույցում նախատեսվում է առաստաղային օդամղիչ:

Խոհանոցների արտածման համար նախատեսված օդատարերը պատրաստվում են հրակայուն 1մմ հաստությամբ սև պողպատից և մեկուսացվում են բազալտե հանքաքամքակով, առանձին առանձին մտնում են հորանի մեջ հատուկ նախատեսված օդատարի մեջ և բարձրանում են 2,5մ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Հասարակական հարկի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծումը կկատարվի ճարտարապետական լուծումներից հետո:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում:

Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակալենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ


Շենքերի էներգաարդյունավետության մակարդակը գնահատելու համար՝ նախատեսված է օդափոխվող ֆասադային համակարգ /вент-фасад/, որը ներառում է ջերմամեկուսիչ շերտի առկայությունը, երեսպատվող քարերի համար լրացուցիչ կոնստրուկտիվ համակարգ, անկեռներով ամրացված արտաքին պատի մակերևույթին: Արտաքին պատի արտաքին կողմից ամրացվող ջերմամեկուսիչ շերտը՝ 100մմ հաստությամբ հանքային բամբակի սալիկները ապահովում են արտաքին պատերի ջերմային դիմադրության նորմատիվային պահանջները:

Շենքերի տանիքները նախատեսված է հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բազմաբնակարան բնակելի համալիրը ունի մեկ ստորգետնյա հարկ որպես ավտոկայանատեղի, որն ունի երկակի նշանակություն և անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել բնակիչների համար որպես պարզագույն թաքստոց:

Նկուղային հարկում առկա է սանհանգույցներ, վթարային անխափան լուսավորություն, որը հնարավորություն կստեղծի անհրաժեշտության դեպքում տնական ժամանակ անցկացնել այնտեղ: Նկուղային հարկի համար նախատեսված է օդափոխության և ծխահեռացման համակարգ:



Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տնոդությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնոդությունը ծրագրվում է 48 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

N Ը/Կ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐ							
		1	2	3	4	5	6	7	8
1	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	—							
2	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	—	—						
3	ՄԻԱԶՈՒՅԼ ԵՐ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ		—	—	—	—	—		
4	ՊԱՏԵՐ ԵՎ ՄԻՋԱՊԱՏԵՐ				—	—	—	—	
5	ՏԱՆԻՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						—	—	
6	ԲԱՑՎԱԾՔՆԵՐ /ԴՈՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ/						—	—	
7	ՍԿԱՂԵ ԵՎ ԵՐԵՄՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ					—	—	—	
8	ՆԵՐՔԻՆ ԿՈՍՏՐՈՒԿՑԻՈՆ ՑԱՆՑԵՐ						—	—	
9	ՀԱՐՄԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						—	—	
10	ՀԱՏԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ							—	—
11	ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ								—

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՏՐԱԿՏԻ ՎԵՐԱԿԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԻԶԱԿԱՆ ԿԱԶՄԵՆՏԱՆԿԱՆ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ

ՎԵՐԱԿԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԻԶԱԿԱՆ ԿԱԶՄԵՆՏԱՆԿԱՆ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ

ՎԵՐԱԿԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԻԶԱԿԱՆ ԿԱԶՄԵՆՏԱՆԿԱՆ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ

ՎԵՐԱԿԱՆԱԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԻԶԱԿԱՆ ԿԱԶՄԵՆՏԱՆԿԱՆ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԸ

1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինարարությունը բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռուների գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով: Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն էջմիածին քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով^a բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:
2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:
3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների» աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ» կոշիկ)» համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում» լուսավորում» օդափոխում» պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)» սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան
2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
3. Աշխատանքի պաշտպանության^a անվտանգության տեխնիկայի» արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման» հրահանգման ժամանակին և որակով անցկացման» անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման» արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 185 մարդ, որից

Ինժեներատեխնիկական անձնակազմ -15 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Ավտոկրունկ	QTZ 63	1
2	Ավտոկրունկ / ստորգետնյա մաս/	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Էքսկավատոր	CAT 320	2
4	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	2
5	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	2
6	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-116А	4
7	Փոխարկիչ թրթրիչների համար		2
8	Գեներատոր	EVROPOWER EP-200X2	1
9	Շարժական բենզինային էլեկտրակայան	Honda ET12000	1
10	Հետահար մուրճ	Makita	1
11	Եռակցման սարքեր		4
12	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
13	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	3
14	Ավտոինքնաթափ		Ըստ հաշվ.
15	Ավտոբետոնախառնիչ	СБ69В	Ըստ հաշվարկի

1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է ամսեկան մեկ մարդու հաշվարկով $0.007 \text{ տ} \times 0,007 \times 185 \times 48 = 62 \text{ տոննա}$ եւ շինարարական աղբն է 800 տ (այդ թվում շենքերի քանդումից առաջացող): Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 15մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ $0.016 \text{ մ}^3 \text{ օր/մարդ}$

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 170 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1440 օր

$$W_{\text{խ.տ.}} = (15 \times 0.016 + 170 \times 0.025) \times 1440 = 6466 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 3200 քմ,

K_1 – 1 քմ օրական ջրցանի նորմը, 0.004 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 960

$$U_1 = 3200 \times 0.004 \times 960 = 12288 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 18754 խմ/շին. ժամ:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Կարճիկյան փողոցով անցնող $D=250$ մմ ջրատարից, ջրահեռացումը՝ միանալով համանուն փողոցով անցնող $D=500$ մմ կոյուղատարին: Հեղեղատարին միանալու տեխնիկական առաջադրանք ստանալու նպատակով փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է մատակարար կազմակերպություն:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Տարածքում նախատեսվում է 185 աշխատողի համար տեղադրել 19 բիոզուգարան: Բիոզուգարանի աշխատանքը հիմնված է բիոլոգիական ակտիվ հեղուկի ազդեցությամբ, որը քայքայում է թափոնները, վերացնում է միկրոբներին և չեզոքացնում հոտերը: Բիոզուգարանները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են մատակարար ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի ստացման համար փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է մատակարար կազմակերպություն:

Համալիրի գազամատակարարումը 850խմ/ժամ նախատեսվող հզորությամբ հնարավոր է իրականացնել Էջմիածին ԳԲԿ – ն սնող $DN\ 300$ մմ գազատարից:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ

դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂԻ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է ՀՀ Արմավիր մարզի Էջմիածին քաղաքի տարածքում, նրա հարավային կողմում: Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Արարատյան լճա կուտակումային հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է՝ աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք, կառուցապատված է: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 867.5-868.5 մետրի սահմաններում:

Տարածքում առկա է քանդման ենթակա տնտեսական շինություն – 301,1 քմ, տնտեսական շինություն 115,1 քմ, ավտոտնակներ – 303,6 , Խորդանոց -29,6 քմ, Խորդանոց -6 քմ, տնտեսական շինություն – 354,8 քմ, տնտեսական շինություն – 290.6 քմ, պարիսպ 0,6 քմ: Ինչպես նաև ինքնակամ շինություններ 928.1 քմ մակերեսով:

Շինությունները մեկ հարկանի են հիմնականում պահեստային նշանակության: Քանդման աշխատանքները կատարվում է սկսված տանիքածածկույթից, քանդված շին աղբը տեղափոխվում է ավտոմոբիլային կռունկով մետաղական տարանների միջոցով, բարձելով ինքնաթափ մեքենաներ և տեղափոխվում համայնքի կողմից շինարարության թույլտվությամբ սահմանված վայր:

Ուսումնասիրվող տարածքը ընդգրկված է Արարատյան հարթավայրի կենտրոնական մասում՝ Էջմիածին համայնքում: Էջմիածին քաղաքը տեղակայված է մարզկենտրոն Արմավիրից 25կմ, իսկ Երևանից մոտ 17կմ հեռավորության վրա: Ճանապարհային հատումների հանգույցներ են հանդիսանում Երևան-Արմավիր-Գյումրի, Աշտարակ-Մարգարա միջպետական նշանակության մայրուղիների և տեղական նշանակության ավտոճանապարհների հատումները:

Էջմիածին համայնքի տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդական հասակի լճային-ալյուվիալ նստվածքները, որոնք ներկայացված են՝ ճալաքարակոպճային առաջացումներով:

Երկրաբանական կառուցվածքը: Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են միջին վերին Միոցենի հասակի հրաբխա-պրոլյուվիալ, հրաբխածին և ջրա-լճային ֆորմացիաների ապարները՝ կավեր, ավազներ, բազալտ, անդեզիտա-բազալտներ, որոնք ծածկված են Չորրորդականի հասակի առաջացումների շերտախմբերով՝ կավեր, ավազներ, ճալաքարա-կոպճային գրունտներ: Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 20.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են միայն նստվածքային գրունտների տարատեսակները:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ չպատկանողված, կոպճա-ավազակավային կազմի, հազվադեպ ճալաքարով և գլաքարերով, շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.8-1.5 մետր: Տեխնածին առաջացումներ

Շերտ թիվ-2 ավազակավ, շագանակագույն, գորշավուն երանգով, պինդ և ձիգ պլաստիկ թանձրության, տեղ-տեղ փափուկ պլաստիկ թանձրության, կոպիճի հազվադեպ ճալաքարի պարունակությամբ մինչև 10%, ավազի բներով, նրբաշերտերով, խոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.8-1.0 մետր: Չորրորդականի հասակի ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-3 ճալաքարա-գլաքարային գրունտ, կոպիճով, հրաբխային ապարներից, լավ և միջին հղկվածության, տարահատիկ ավազային և ավազակավային լցանյութով մինչև 45%, մանր և միջին ավազների նրբաշերտերով, ոսպնյակներով, բներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ և ջրհագեցած, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 18.0 մետր: Չորրորդականի հասակի ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-4 ավազ միջին և խոշոր, մասամբ կոպճային, մոխրա-դարչնագույն, ճալաքարի, կոպիճի, երբեմն գլաքարերի պարունակությամբ մինչև 15%, կավավազի նրբաշերտերով, բներով, փուխր, ջրհագեցած, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-1.5 մետր: Չորրորդականի հասակի ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

Հիդրոերկրաբանական պայմանները Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Չորրորդականի հասակի բերվածքային (նստվածքային) առաջացումների չստորաբաժանված համախմբերին, պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ոչ ճնշումային ջրերի տարատեսակներին: Ստորգետնյա ջրերը դաշտային հորատման աշխատանքների ընթացքում բացահայտվել են բոլոր հորատանցքերում: Դրանք հիմնականում բացահայտվել են 6.9-7.2 մետր խորությունների վրա և կայունացել են 6.4-6.8 մետր խորություններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04-2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ:

9. Եզրակացություններ

1. Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով, համաձայն Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքի, իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների որոշում լաբորատոր պայմաններում, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախգծա-հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:

2. Հետազոտվող տարածքը տեղադրված է Էջմիածին քաղաքի հարավային մասում, Կարճիկյան 2 հասցեով:

3. Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Արարատյան լճակուտակումային հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է՝ աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք, կառուցապատված է:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 867.5-868.5 մետրի սահմաններում:

Համաձայն ՀՀՇՆ ՀՀՇՆ 22-01-2023 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման տաք կլիմայական գոտու մեջ:

Մեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմակտիվ մարզերից մեկը:

4. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Չորրորդականի հասակի բերվածքային (նստվածքային) առաջացումների չստորաբաժանված համախմբերին, պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ոչ ճնշումային ջրերի տարատեսակներին: Ստորգետնյա ջրերը դաշտային հորատման աշխատանքների ընթացքում բացահայտվել են բոլոր հորատանցքերում: Դրանք հիմնականում բացահայտվել են 6.9-7.2 մետր խորությունների վրա և կայունացել են 6.4-6.8 մետր խորություններում:

5. Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքերի վրա, հաշվի առնելով գրունտների երկրաբանական տարիքը, ծագումը և տարատեսակները, երկրաբանական հետազոտության 20.0 մետր հաստվածքում առանձնացվել են գրունտների 4 շերտեր՝

 Ամսաթիվ	 11.2024	24-50 Էջմիածին	Էջ
			12

- | | |
|-----------------------------|--------------|
| — լիցքային գրունտներ | — շերտ թիվ 1 |
| — կավային գրունտներ | — շերտ թիվ 2 |
| — խոշորաբեկորային գրունտներ | — շերտ թիվ 3 |
| — ավազային գրունտներ | — շերտ թիվ 4 |

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ցուցանիշները տրված են սույն եզրակացության 6-րդ բաժնում:

6. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, բացակայում են: Հարկ է նշել, որ տեղամասում նախկինում գոյություն ունեցած շենքերի հատվածում երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի վերին մասը զբաղեցնում են լիցքային գրունտները, նշված հատվածում դրանց հզորությունը հասնում է 2.0 մետրի:

Տեղամասի հարավ-արևելյան եզրամասում հորատված թիվ 8 հորատանցքի սահմաններում 2.5-6.0 մետր միջակայքերում ճալքաբար-կոպճային գրունտները ողողված են նավթամթերքի թափոններով, ինչն արդյունք է հարակից մասում նախկինում տեղակայված նավթամթերքի պահեստից տեղի ունեցած արտահոսքերի: Նշված գրունտները կառույցի հիմնատակերի սահմաններում ենթակա են հեռացման:

Հարկ է նշել նաև, որ գրունտային ջրերն ունեն բավական բարձր տեղադրում(6.4-6.8 մետր) և մակարդակի տատանումներ 0.8-1.0 մետրի չափով:

7. Համաձայն ՀՀՇՆ 20-04 նորմի հետազոտվող տեղամասը մտնում է սեյսմիկ առաջին գոտու մեջ:
8. Հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման տեսակետից ունի պայմանական բարենպաստ ինժեներա-երկրաբանական պայմաններ:

Ինժեներ-երկրաբան՝



Ն. Ալեքսանյան



Ամսաթիվ

11.2024

24-50 էջմիածին

Էջ

13

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արմավիրի մարզի ք. Էջմիածին, Կարճիկյան փողոց 2 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում:

Գործունեության տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքներում: Բնության հատուկ պահպանվող տարածքներից մարզում է գտնվում «Որդան կարմիր» պետական արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 24 արգելավայրերից մեկը: Այն կազմավորվել է 1987թ., ՀՀ Արմավիրի մարզում ունի 219. 85 հա տարածք և չունի որևէ առնչություն նախատեսվող գործունեության տարածքի հետ, քանի որ տեղակայված է Արարատյան դաշտում Արգավանդ, Արագափ և Ալաշկերտ գյուղերի միջև, ծովի մակարդակից 900-950մ բարձրություններում: Արգելավայրի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում - բացակայում են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են նաև պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները, ինչը երևում է նաև «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 385-ն որոշումից (15 մարտ, 2007 թ.), որում Արմավիր մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված հուշարձանները որևէ առնչություն չունեն նախատեսվող գործունեության տարածքի հետ:

Արմավիրի մարզի բնության հուշարձանների ցանկը

Ջրագրական հուշարձաններ

«Մեծամոր» լիճ	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ
Կենսաբանական հուշարձաններ	
1. «Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
2. «Զրաճահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

2.2 ԿԼԻՄԱՆ

Շրջանը և տեղամասը մտնում են տաք կլիմայական գոտու մեջ, ունի չոր, ցուրտ ձմեռ և շոգ, կիզիչ ամառ, խիստ ցամաքային կլիմա: Կլիման բնորոշվում է հիմնականում երկարատև շոգ ամառով և կարճատև ցուրտ ձմեռով: Ստորև տրվում են միջինացված կլիմայական հարաչափերը՝ բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +41, ամենատաք ամիսներն են՝ Հուլիս, Օգոստոս: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -31, ամենացուրտ ամիսներն են՝ Հունվար և Փետրվար: Օդի միջին ջերմաստիճանը՝ +11.7C: Տարեկան մթնոլորտային տեղումների միջին քանակությունը՝ 306 մմ.: Ձյան ծածկոցի միջին հզորությունը՝ 30 սմ, ճնշումը՝ 50 կգո/քմ: Գրունտի սառչելու առավելագույն խորությունը՝ 60սմ.: Գերակշռում են հիմնականում արևելյան և արևմտյան ուղղության քամիները 1.1 մ/վրկ միջին արագությամբ, 20 տարին մեկ անգամ հնարավոր են 22 մ/վրկ ուժգնությամբ քամիներ: Տարեկան միջին օդի խոնավությունը կազմում է 61%:

Գործունեության տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Համաձայն նշված փաստաթղթի Արմավիր քաղաքում կլիմայական բնութագրերն են.

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև-ութաբ. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան «Զվարթնոց»	-3.7	-1.3	5.9	13.1	17.5	22.2	26.3	25.8	20.7	13.3	5.9	-0.2	12.1	-30	42

Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև-ութաբ. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Երևան «Զվարթնոց»	81	76	64	57	58	50	47	46	50	63	74	82	62	81	67	47	30

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների												Տարեկան		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան «Զվարթնոց»	25	21	36	39	42	19	12	9	10	25	25	23	286	130	156

Քամիները.

ավանումը	Բնակի վեբ-էջ	Միջին տարեկան փոխադրումներ (հոգ)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհատական թվերի տեղի Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ (≈ 15 մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում										
				Միջին արագությունը, մ/վ																				
				Հունվարի	Հունիսի	Արեւելյան	Արեւելյան	Հարավ Արեւելյան	Հարավ	Հարավ-Արեւմտյան	Արեւմտյան			Հունիսի	Հունիսի	20	50	100						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18							
Երևան "Զվարթնոց"	917,5	հունվ	14	22	8	9	15	13	12	7	66	0,8	2,1	46	21	22	23							
			2,2	2,8	2,3	2,6	2,4	2,2	2,7	248														
		ապրիլ	11	25	10	13	17	10	9	5	21	2,7												
			3,5	3,7	3,1	3,8	3,2	3,5	4,2	3,3														
		հուլիս	17	31	8	11	16	8	5	4	16	3,8												
			6,4	6,5	3,1	2,9	2,7	2,8	3,0	3,5														
		հոկտ	13	27	10	12	17	9	7	5	41	1,6												
			2,9	3,2	2,6	2,7	2,5	2,6	3,2	2,7														

Активация

2.3 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Էջմիածին համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 4-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազդաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազդաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն 2011թ.-ի ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Էջմիածին համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 56974 մարդ: Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ. 4), Էջմիածին համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշու մասնիկներ՝ 0,4 մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 1.5 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,03 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ³: Նշված մակարդակները չեն գերազանցում ՀՀ ազգային նորմերը (ՀՀ կառավարության որոշում 160-Ն, 2006 թ.), բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 2.6 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ (ՍԹԿ_{փոշի}=0,15 մգ/մ³):

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (ֆոն), մգ/մ3
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «զերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է ջրավազանային կառավարման 6 տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:

Համաձայն ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2024թ. համար հրապարակված մակերևութային ջրերի որակի վերաբերյալ տարեկան վերջին ամփոփագրի տվյալների, Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածում՝ լուծված թթվածնով և ամոնիում իոնով: Նախատեսվող գործունեության արդյունքում ջրային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում,

քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/կանխմանը:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Համաձայն “Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ 2022թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների նշված տարածքի համար հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվում:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 17500 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող ամբողջ 17500 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Էջմիածինի քաղաքապետարանի կողմից սահմանված վայր, որի մի մասը հետլիցքի նպատակով հետագայում նորից կբերվի տարածք:

2.7 Կենսաբազմազանություն

Բնութագրվող Ծրագրի իրականացման բուն տարածքը տեղակայված է ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոց թիվ 26 հասցեում: Իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք: Տեղանքը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, ինչը փաստում է, որ նախատեսվող գործունեության տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Տարածքը զուրկ է բուսականությունից՝ բացառությամբ տեղ-տեղ ինքնաբերաբար աճող ոչ արժեքավոր բուսականությունից:

2.8 Թափոնների կառավարում

Էջմիածին քաղաքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝

1. կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 62 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և մոտ 800 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/ (այդ թվում շինությունների քանդումից առաջացող), ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք:

2. Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 14400 խմ ծավալով, կտեղափոխվի Էջմիածինի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

3. Եռակցման աշխատանքներից առաջացող «Եռակցման խարամ» 0,15տ շին. ընթացքում: Ծածկագիրը՝ 3140480001994: Վտանգավորության դասը՝ 4:

4. «Յուղոտված լաթեր»: Ծածկագիրը՝ 5820060001014: Վտանգավորության դասը՝ 4: Թափոններն առաջանում են սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների շահագործման և վերանորոգման ընթացքում: Յուղոտված լաթերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով: Թափոնի գոյացման չափաքանակը հավասար է 0.12 շին. ընթացքում:

5. Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը /ծածակագիրը՝ 5410020702033/ կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին, հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով բետոնյա հարթակը ունի թեքություն հարթակի որոշակի հատված որտեղ էլ կկուտակվի յուղը, որտեղից կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, հետագայում նույնպես կտրամադրվի վերամշակող ընկերության:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- քանդման աշխատանքների,
- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ քանդման և շինարարության փուլում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում,
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Շինհրապարակից ելքի ժամանակ տեխնիկական միջոցների Karcher-ի միջոցով անվադողերի լվացումից առաջացած հոսքաջրերը և անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանները գտնվում են շինարարական հրապարակին կից, ցածրադիր հատվածներում իրենցից ներկայացնում են պլաստմասե 2 հատ 50 խմ ծավալով տարողություններ, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 1000 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով շլամը կհեռացվի որպես շինադր:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

-

3.3.4 ԿԱՆԱՀԱՊԱՏՈՒՄ

- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Էջմիածին համայնքի համաձայնեցմանը: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 3884.04 քմ:
- Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 380 խմ բուսահող, որի ձեռքբերումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով համաձայնեցնելով Էջմիածին համայնքի հետ:
- Տարածքում նախատեսվում է տնկել Գնդաձև ակացիա – 12 հատ, Ուռենի բարելոնական 4 հատ, Թույա – 8 հատ, Գնդաձև թույա – 12 հատ, Յասաման – 12 հատ, վարդեր գետնատարած – 8 հատ, Բոցենի 80 հատ, Վաղենակ – 100 հատ, Սոխածաղիկ 900 հատ:
- Ոռոգման ջրապահանջը $(3884 \text{ քմ} \times 10 \text{ Լ} \times 8 \text{ (ամսեկան ոռոգման քանակ)} \times 7 \text{ (ոռոգման ժամանակաձրջան՝ ամիս)}) / 1000 = 2175 \text{ խմ}$
- Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 48 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 3 տարի հետո:

3.3.5 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բուսականության պահպանում և կառավարում;
- Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով:
- Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:
- Կառուցապարման ենթակա տարածքում հատման ենթակա ծառեր չկան:

3.3.6 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
 - Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
 - Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:
 - Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
 - Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.7 ԱՂՍՈՒԿԻ և ԹՐԹՈՒՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՍՈՒԿՆ ԱՇԽԱՏՍԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՍՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում շենքում նախատեսվում է.
- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էկսկավատորը, իսկ ավարտին գլոմը: Միաժամանակ այս շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ:

Էկսկավատորը աշխատելու է 4 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 85 դԲ: Գլոմը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 3 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ $\leq 200 \text{ կգ/քմ}$: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/քմ}$$

$$I_{աղ} = 13 \lg m - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/քմ}$$

$\Delta R_{տեղ} \text{ մե} = K m$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/քմ

$$K=1,3 \text{ մ է} = 1,3 \times 200=260$$

$$L_{աղ} = 13lg m_t - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշտպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը $R_{Ատ}$ ր ըստ աղուսյակ 2՝ կազմում է միջնը 50 դԲ:

$$LA_{տար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

$$G_{լոռնի} \text{ համար } LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 16,8 - 50 = 13,2 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլղոնի 13,2 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթում

Թրթուման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթուման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները:

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթուման արագացում		Թրթուման արագություն	
	մ/վրկ ² .10 ⁻³	դԲ	մ/վ .10 ⁻³	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
<p>Ոչ մշտական թրթուման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:</p> <p>Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:</p>				

Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բնակելի համալիրում շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացման ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
6. Հարակից տարածքներում կեղտաբազմազանության և կենդանական աշխարհի մոնիթորինգ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2100000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	48x45000	2160000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	16x35000	560000
Ամբողջ շինարարության համար		3120000



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Քանդման և Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p> <p>(d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>

	Թափոնների կառավարում	<p>(a) Քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Քանդման և շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոգիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրված բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաններով:</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p> <p>(c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը, բարձր ճնշման ջրով (Karcher): Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով շլամը կհեռացվի որպես շինաղբ:</p>
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների



		ընթացքում:
Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
Կենսաբազմազանություն	Ծառափայլին բուսականության վրա ազդեցություն	<ul style="list-style-type: none"> - Բուսականության պահպանում և կառավարում - Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով - Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում: - Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն - ազդեցության չեն ենթարկվում
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	<ul style="list-style-type: none"> - Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում - Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ



ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի վնասումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	<ul style="list-style-type: none"> - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ 	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողությ



					ուն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կենսաբազմազանություն	Սեփական տարածքի և շինհրապարակի հարակից տարածքի ազդեցության ենթարկված բուսականության և կենդանական աշխարհի ուսումնասիրում	Հարակից տարածք	Արտաքին զննում	Եռամսյակ	Կապալառու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ